

3  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Բ

ԲԱՆՈՒԻ ՍՂՍՄ ԳԻՒԳԻ

ԳՂԲՈՑԱՍԵՐ ԵՐԷՏԱՍԱՐԲԱՅ



ՄԻՈՒՐԵԱՆ



Հիմնուած 1903, Յուլիս 26 ին

ՊՐԻՃՓՐԹ ԲԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Յ՝ ԱՄԵՐԻԿԱՅ

1910



— Տ Ր Տ Ո Ի Ն Ջ Ն Ե Ր —

Մեր խեղձ ազգը ուսումն չունի,  
Չունի ուսումն՝ ինքը ալ չունի.  
Խեղճներս այդ շառ գիտեմք,  
Օգնելու տեղ՝ ընկ կը խօսեմք:

**ՔԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ**



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



## ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՔ

- 1 Եակոբ Թովմասեան
- 2 Թորոս Աշերիսեան
- 3 Եովհաննէս Մարգարեան
- 4 Մարտիրոս Կարապետեան
- 5 Մէլքոն Կիւմիշեան
- 9 Դանիէլ Մանուշեան
- 7 Եովհաննէս Մարտիրոսեան
- 8 Գորոս Գոյաձեան
- 9 Եակոբ Խ. Տօնիկեան
- 10 Վարդան Մարգարեան
- 11 Խաչիկ Մանուշեան
- 12 Եակոբ Մ. Տօնիկեան
- 13 Եարոզփիւն Տէր Եովհաննէսեան
- 14 Սարգիս Ճանիկեան

### ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դպրոցի օգտակարութեան մասին երկարօրէն ճառերն ու ներբողներ կարդալը՝ աւելորդաբանութիւններ պիտի համարէինք, քանի որ ամեն օր կը տեսնենք թէ՛ ամենամեծ ու հզօր Ազգեր, իրենց մեծութիւնը կը շափեն իրենց դպրոցներու և իրենց գիտութեանց առաւելութեամբը: Վասնզի Դպրոցն է կենսատու աղբիւրը իրենց բոլոր գորութեանց, ըլլայ տնտեսական, ըլլայ բարոյական ու ըլլայ Ֆիզիքական:

Մարդկութիւնը ապրելու իր նախնական պայմաններուն մէջը չէ: Այդ պայմանները բոլորովին յեղաշրջուած են: Առողջապահական, հողագործական, արհեստական ու ճարտարարուեստական հանգստարար, գիւրաստեղծ ու շահաբեր նոր միջոցներ հնարուած են:

Եւ այն բոլոր ժողովուրդները, որ դեռ երէկ մեծ ու բազմաթիւ էին՝ ու այսօր զուրկ կամ հեռու մնացին յառաջդիմութեան միջոցներու այդ գիտութենէն, մաշեցան կամ սոխպուած են տկարանալ ու օր մը սպառիլ: Եւ ցեղի մը սպառման գործին մէջ, մարդկային զգայնականութիւնը ու նախապէս սահմանուած իրաւունքները բնաւ հակազգեցութիւն մը չեն կրնար ներգործել: Պահպանման գլխաւոր ազգակը ոյժն է, ոյժն է իրաւունքի աւսմանիչը, եւ այդ ոյժը կը ստացուի գիտութեամբ — դպրոցէն:

Հայերս, եթէ դեռ ունինք ինքնագիտակցութեան զգացում, եթէ դեռ ապրիլ կուզենք, շատ աւելի պէտք ունինք զոհողութեան քան մեծ Ազգերը: Մեր ակաբութեան համեմատութեամբ, անհունապէս աւելի պէտք ունինք գիտութեան: Պէտք է որ ամեն երկտուն Հայ գիւղ ունենայ իր դպրոցը: Մեր գոյութեան, մեր ինքնապաշտպանութեան աղբիւրն է այն եւ պիտի ըլլայ զէնքը մեր ապագայ մեծութեան:


Պոմանեան Սահմանագրական բազմացեղ երկրին մէջ՝ մեր ցեղին ոյժն ու առաւելութիւնը զգացնել պիտի տանք մեր դպրոցներու առաւելութեամբ ու օգտաշատութեամբը: Մեր ստացած ու ստանալիք իրաւունքներու քանակը, մեր դպրոցներու առաւելութեանց նըժարին մէջ պիտի դնենք: Բայց և այնպէս այդ առաւելութիւնները պիտի կրնանք ձեռք բերել միմիայն մեր պարտականութեանց համեմատական կատարումով, այն է՝ ապրելով նուազ եսասէր, նուազ ընչաքաղց, ի մի խօսք, մէկս ամէնքին համար, և ամէնքս մէկին համար:

Սղամ Գիւղի Դպրոցասէր Երիտասարդաց Միութեան հիմնադիրներս ու անդամները, նախանձա-

խընդիր մեր Ազգի ու Գիւղի մեծութեան, խորապէս թափանցած ենք Դպրոցի օգտաշատութեանը մասին և 1903 թուէն սկսեալ մէկ սիրտ, մէկ հոգի, առաջ տարինք այս ազգաշէն ձեռնարկը ու չը պիտի ընկրկինք ապագային մէջ ու և է դժուարութեանց առջև:

Ու այսու կոչ կընենք սոյն սողերը ընթերցող հասարակութեան և մասնաւորապէս մեր Բալուցի Հայրենակիցներուն որ քան Հայրենեաց մեծութեան ու ինքնապաշտպանութեան անխորդակելի վահանը կռել, Դըպրոցի ու գիտութեան միջոցաւ:

Կեցցէ՛ ուրեմն Սղամի Դպրոցը.  
Կեցցեն Հայ Ուսումնարանները:



## Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

Բ Ա Լ Ո Ի Ի Ս Ղ Ա Մ Գ Ի Ի Ղ Ի

ԴՊՐՈՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

### ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1. - Բալուչի Սղամ Գիւղի Դպրոցատէր Երիտասարդաց Միութեանս նպատակն է. Սղամ գիւղի մէջ Դպրոց մը պահել՝ վճարելով ուսուցիչներու թոշակը և հոգալով դպրոց յաճախող աշակերտաց (Սղամցի կամ ոչ Սղամցի) անխտիր դպրոցական բոլոր ծախքերը:

Յօդ. 2. - Միութեանս անունն է եւ պիտի մնայ ԲԱԼՈՒԻ Ի Ս Ղ Ա Մ Գ Ի Ի Ղ Ի ԴՊՐՈՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻԻՆ:

### ՀԱՍՈՑԹԻ ՄԻՂՈՑՆԵՐ

Յօդ. 3. - Ա. Մուտքեր: Բ. Սմաւճարներ: Գ. Նըուէրներ: Դ. Հանդէսներէ, Ժողովներէ և այլնից գոյացած հասոյթներ:

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 4. - Սմեն Հայ՝ առանց խտրութեան սեռի և դաւանանքի՝ կրնայ անդամակցել Միութեանս:

Յօդ. 5. - Միութեանս անդամակցել ցանկացողները պէտք է նամակաւ կամ անձամբ դիմեն տեղական Մասնաճիւղին, և պէտք է որ՝ Միութեանս անդամներէն ունենան առաջարկող մը և երկրորդող մը որոնք առնուազն 6 ամիս Միութեանս անդամակցած լինին:

Յօդ. 6. - Միութեանս անդամակցիլ փափաքողները պարտին վճարել մէկ տօշար մնւոք եւ 25 սէնթ ամսավճար:

Յօդ. 7. - Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է կատարել կէտ առ կէտ այն բոլոր պարտականութիւնները որ արձանագրուած են ներկայ կանոնագրին մէջ: Հակառակ գտնուողները օրինազանց նկատուելով կարտաքսուին:

Յօդ. 8. - Միութեանս շահերուն թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս հակառակ գործող ո և է անդամ կը վտարուի Միութեանս շարքերէն՝ հետ քննութեան:

Յօդ. 9. - Անդամ մը, որ առանց բանաւոր պատճառի իր վեց ամսուայ ամսավճարները անվճար կը թողու, ժողովներու մէջ քուէ տալու իրաւունքէն կը զրկուի:

Յօդ. 10. - Միութեանս անդամներէն ո և է մէկը եթէ տարբեր քաղաք մեկնի և հոն մասնաճիւղ գոյութիւն չունենայ, պարտաւոր է ամսականները վճարել իր պատկանած մասնաճիւղին:

Յօդ. 11. - Ո և է անդամ իրաւունք չունի Սղամ Գիւղի Դպրոցի Խնամակալութեան և կամ անհատներու հետ թղթակցիլ Միութեանս գործերու նկատմամբ:

Յօդ. 12. - Արտաքսուած կամ հրաժարած անդամ մը՝ Միութեանս վրայ ո և է պահանջ ունենալէ կը դադրի:

### Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

Յօդ. 13. - Յ էն - 5 հոգիէ բաղկացեալ խումբ մը օրինաւոր մասնաճիւղ կազմելու իրաւունք ունի:

Յօդ. 14. - Իւրաքանչիւր մասնաճիւղ կընտրէ վարչութիւն մը, Յ էն 5 անդամներէ բաղկացած:

Յօդ. 15. - Մասնաճիւղի վարչութիւնը անդամական ժողովներու սրշումները լրիւ գործագրող մարմինն է, որը իր մէջէն կընտրէ իր Դիւանը:

Յօդ. 16. - Մասնաճիւղի վարչութիւնը պարտաւոր է իրեն եկած պաշտօնական բոլոր գրութիւնները ներկայացնել Անդամական Ժողովին:

Յօդ. 17. - Մասնաճիւղերը ազատ են ինպատո Միութեանս ժողովներ և հանդէսներ սարգել:

Յօդ. 18. - Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է հրաժարեալ կամ արտաքսեալ ընկերոյ մասին տեղեկութիւն տալ կեդրոնական վարչութեան և մասնաճիւղերուն:

Յօդ. 19. - Իւրաքանչիւր անդամ՝ իրաւունք ունի բողոքել թէ՛ վարչութեան և թէ՛ Անդամական Ժողովի սրշումներուն դէմ՝ կեդրոնական վարչութեան կամ Պատգամաւորական Ժողովին:

Յօդ. 20. - Մասնաճիւղերու վարչութեան կամ պարզ անդամներէն մէկին հրաժարման պարագային, գրաւոր հրաժարականը պէտք է քննուի անդամական ժողովի մէջ և ըստ այնմ՝ կարգագրութիւն ըլլայ:

Յօդ. 21. - Ո և է անդամ՝ երբ բողոք մը ունենայ՝ պարտաւոր է իր բողոքները նախ գրաւոր ներկայացնել Միութեանս ժողովներուն:

Յօդ. 22. - Մասնաճիւղ մը երբ նկատէ իր վարչութեան ո և է մէկ զեղծումը, իրաւունք ունի իսկոյն հրաժարեցնել և ընտրել նորը, տեղեկագրելով մանրամասն կեդ. վարչութեան:

Յօդ. 23. - Միութեանս իւրաքանչիւր մասնաճիւղ իր վեց ամսեայ բոլոր հաշիւները պարտաւոր է ուղարկել կեդր. վարչութեան՝ և ստանալ ստացագիր:

Յօդ. 24. - Մասնաճիւղ մը երբ իր մէկ տարուան պարտականութեանց մէջ թերացած կը լինի, Պատգամաւորական ժողովին մէջ ձայն ունենալէ կը դադրի, ի բաց առեալ այն պարագային երբ թերացումի պատճառները՝ յետ քննութեան՝ Պատգամաւորական ժողովը օրինաւոր կը գտնէ:

Յօդ. 25. - Լուծուած մասնաճիւղի գոյքերը պիտի յանձնուին կեդրոնական վարչութեան:

Յօդ. 26. - Մասնաճիւղերը իրենց կնիքը կը ստանան կեդրոնական վարչութեանէն:

### ԱՆԳԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 27. - Անդամական ժողովը մասնաճիւղի վերաբերեալ գործերու մասին որոշում տուող մարմինն է, որ կազմուած է տեղական ընկերներէ:

Յօդ. 28. - Անդամական ժողովներու օրակարգը կը պատրաստէ վարչութիւնը. սակայն ժողովի ժամանակ անդամներու կողմէն ալ կարող են հարցեր առաջարկուիլ ի քննութիւն:

Յօդ. 29. - Անդամական ժողովի բացումը կը կատարուի նախորդ ժողովի արձանագրութեամբ եւ վաւերացմամբ:

Յօդ. - 30. Մասնաճիւղերը իրենց Անդամական ժողովը ունենալու են 15 օրը կամ ամիսը մի անգամ:

Յօդ. 31 - Իւրաքանչիւր մասնաճիւղ՝ ուրիշ քաղաք մը փոխադրուող իր մէկ անգամին պարտաւոր է տալ յանձնարարական մը, զոր ներկայացնէ իր նոր գնացած տեղի մասնաճիւղի ընկերներուն:

Յօդ. 32. - Իւրաքանչիւր մասնաճիւղի անգամ պարտաւոր է անդամական ժողովներուն մէջ օրինապահ

լինել. հակառակ պարագային Ատենապետը իրաւունք ունի կարգի հրահրելու և ի վերջոյ՝ ժողովի որոշումով արտաքսելու անկարգապահ ո և է անդամ:

### ՊԱՏԳԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 33. - Սզամ Գիւղի Դպրոցասէր Երիտասարդաց Միութիւնս տարին մէկ անգամ կուսենայ իր Պատգամաւորական ժողովը, որ կը զբաղի Միութեան վերաբերեալ բոլոր հարցերով:

Յօդ. 34. - Պատգամաւորական ժողովը օրինաւոր կը համարուի երբ Պատգամաւորները մեծամասնութիւն կը կազմեն:

Յօդ. 35. - Պատգամաւորական ժողովը, Միութեանս գերագոյն մարմինը լինելով՝ իրաւունք ունի թէ մասնաճիւղերու և թէ Միութեանս վերաբերեալ բոլոր գործերը քննութեան առնուլ և պէտք եղածը տնօրինել:

Յօդ. 36. - Պատգամաւորական ժողով հրահրողը կեդ. վարչութիւնն է, որ պարտաւոր է Պատգամաւորական ժողովի գումարման տեղը և ժամանակը մէկ ամիս առաջ հաղորդել մասնաճիւղերուն՝ ուղարկելով անոնց նաև ժողովի օրակարգը, որուն վրայ մասնաճիւղերը իրաւունք ունին իրենց առանձին հարցերը աւելցունել:

Յօդ. 37. - Իւրաքանչիւր Պատգամաւոր պարտաւոր է իր մասնաճիւղի կնիքով վաւերացուած վկայական մը ունենալ:

Յօդ. 38. - Իւրաքանչիւր 10 ձայն ներկայացնող Պատգամաւոր երկու ձայն ներկայացունելու իրաւունքը ունի. 10 - 15 ը երեք ձայն:

Յօդ. 39. - Պատգամաւորական ժողովին 5 - էն 7 Պատգամաւորէն պակաս եղած պարագային, տեղական

ընկերները իրաւունք ունին ձայն ներկայացնել, պայմա-  
նաւ սակայն որ, հեռու տեղէ եկած պատգամաւորները  
իրաւունք ունենան, իրենց մասնաճիւղի ընկերներու  
իւրաքանչիւրի ձայնը ներկայացնել:

Յօդ. 40. - Պատգամաւորական ժողովը կընտրէ իր  
մէջէն Գիւան մը, որուն պաշտօնավարութեան շրջանը  
կը տևէ մինչև ժողովի վերջնալը:

Յօդ. 41. - Պատգամաւորական ժողովի, ինչպէս  
նաև բոլոր ժողովներու որոշումները կը տրուին ձայնե-  
րու մեծամասնութեամբ:

Յօդ. 42. - Պատգամաւորական ժողովը կընտրէ  
Կեդրոնական վարչութիւն մը՝ բաղկացած 5-7 անդամ-  
ներէ. կընտրէ նաև 3-5 հոգիէ բաղկացեալ խնամակա-  
լութիւն մը Սղամ գիւղի մէջ, Դպրոցը կառավարելու  
համար:

Յօդ. 43. - Արտակարգ Պատգամաւորական ժողով  
կարելի է գումարել, երբ մասնաճիւղերու մեծամասնու-  
թիւնը կը պահանջէ:

Յօդ. 44. - Իւրաքանչիւր պատգամաւորի ծախքը կը  
հոգացուի իր մասնաճիւղի գանձարանէն՝ կամ անդամ-  
ներու նուէրներով:

Յօդ. 45. - Պատգամաւորական ժողովի բոլոր որո-  
շումները գործադրող մարմինն է Կեդրոնական վար-  
չութիւնը, որ լիազօրութիւն ունի Միութեանս բոլոր  
գործերը կատարելու:

Յօդ. 46. - Կեդ. վարչութեան պաշտօնավարութիւնը  
կը տևէ մէկ տարի: Իսկ մասնաճիւղերու վարչութեան  
պաշտօնավարութեան շրջանը վեց ամիս:

Յօդ. 47. - Կեդրոնական վարչութիւնը՝ հաւաքա-  
պէս մէկ ձայն ներկայացնելու իրաւունք միայն ու-

նի ընդհ. Պատգամաւորական ժողովին, սակայն պար-  
տական է իր կազմով ներկայ լինել Պատգ. ժողովին:

Յօդ. 48. - Կեդր. վարչութիւնը պատասխանատու  
է Պատգ. ժողովի առաջ թէ հաւաքապէս՝ թէ անհա-  
տապէս:

Յօդ. 49. - Կեդր. վարչութիւնը՝ ինչպէս նաև մաս-  
նաճիւղերու պատգամաւորները պարտաւոր են իրենց  
Ֆէկ տարուայ թէ նիւթական և թէ բարոյական հաշիւ-  
ները մաքրել եւ ներկայացնել Պատգ. ժողովին:

Յօդ. 50. - Կեդր. վարչութեան անդամ՝ ընտրուե-  
լու իրաւունք ունին ամէն անոնք որոնք իրենց նիւթա-  
կան և բարոյական պարտականութիւնները կատարած  
են, ինչպէս նաև մէկ տարի անգամակցած ըլլան Մի-  
ութեանս:

Յօդ. 51. - Կեդր. վարչութիւնը իր գանձին մէջ  
25-30 տօլար պահելու իրաւունք միայն ունի, աւելին  
պարտական է ԴՐԱՄԱՏՈՒՆ պահել:

Յօդ. 52. - Միութեանս ունեցած պատրաստի դը-  
րամը ապահով գումատուն մը կը դրուի, Դպրոցասէր  
Երիտասարդաց Միութեանս (Segham=Palou Young  
Men's School-aid Union) անունով եւ ստորագիւ-  
թեամբ Կեդր. վարչութեան 3 անձանց՝ Ատենայետի,  
Ատենադպիրի և Գանձապետի:

Յօդ. 53. - Դպրոցասէր Երիտասարդաց Միութեա-  
նըս պատրաստի դրամը ո և է անհատի շահով տալը  
խսպառ արգիլուած է: Սակայն անչարժ կալուածներ  
առնելու որոշումները՝ Պատգ. ժողովը կրնայ տալ:

Յօդ. 54. - Միութիւնս կը լուծուի այն պարագա-  
յին երբ անդամներուն թիւը 3 էն պակաս կըլլայ:

Յօդ. 55. - Երբ Միութիւնս լուծուի, պատրաստի



դրամը ամբողջութեամբ «Հայոց Միացեալ Ընկերութեանց» կը յանձնուի:

Յօդ. 56. Միութեանս անունը եւ նպատակը կը մնայ անփոփոխ. իսկ կանոնագրի ու է յօդուածը կը ընայ փոփոխութեան ենթարկուիլ Պատգ. ժողովի կողմէն ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 57. - Երկրի խնամակալութեան հետ բոլոր պաշտօնական յարաբերութիւնները կը կատարուին կեդր. վարչութեան միջոցաւ:

**ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Յօդ. 58. - Կեդր. վարչութիւնը եւ մասնաճիւղերու վարչութիւնները իրենք իրենց մէջէն կը նտրեն, Ատենապետ մը, Ատենագլխի մը, Գանձապետ մը և Կնքապահ մը, ինչպէս նաև խորհրդատու անդամներ:

**Ատենապետի պաշտօնն է**

Ա. - Որոշեալ ժամանակին ժողովի հրաւիրել վարչութեան անդամները:

Բ. - Եղած բոլոր որոշումներուն անթերի գործադրութեան հսկել:

Գ. - Ստորագրել իր անունը եղած բոլոր պաշտօնական գրութիւններուն տակ, Ատենագլխի հետ:

**Ատենապետի պաշտօնն է**

Ա. - Ժողովներուն արձանագրութիւնը կազմել մասնաւոր տետրակի մը մէջ:

Բ. - Թղթակցութիւնը կատարել:

Գ. - Վարչութեան եկած բոլոր գրութիւնները ըստանալ և պաշտօնակցի մը ներկայութեամբ բանալ և վարչական ժողովներուն ներկայացնել:

Դ. - Ատենապետին հետ պաշտօնական գրութիւններու տակ ստորագրել:

**Գանձապահի պաշտօնն է**

Ա. - Վարչութեան անունով եկած բոլոր դրամները ստանալ փոխարէն ստացագիր տալով:

Բ. - Վարչութեան ծախքերը հոգալ:

Գ. - Ելեմտական կանոնաւոր հաշուետոմար ունենալ. իր միջոցաւ եղած բոլոր ծախքերուն եւ ղրկուած դրամներուն ընկալագրերը ներկայացնել պատգամաւորական ժողովին:

Դ. - Դրամական ամեն գործողութեանց տակ իր ստորագրութիւնը դնել և կնքել:

**Կնքապահի պաշտօնն է**

Վարչութեան կնիքի պահպանման նախանձախնդիր ըլլալ և դնել պաշտօնական գրութեանց ներքև. առանց կնիքի գրութիւն մը անպաշտօն կը համարուի:

**Խորհրդատու անդամներու պաշտօնն է**

Միութեանս նպատակին ի նպաստ խորհուրդներ տալ. թելագրութիւններ ընել և աշաւուրջ ըլլալ Միութեանս գործերուն:

Յօդ. 59. - Պատգամաւորական ժողովներու արձանագրութեանց տակ կը ստորագրեն Պատգ. ժողովի Ատենապետ եւ Ատենագլխի:

Յօդ. 60. - Կեդր. վարչութեան անդամ մը չի կը ընար մասնաճիւղերու վարչութեան անդամ լինել: Ինչպէս նաև պատգամաւոր:

Յօդ. 61. - Անդամ մը առանց բանաւոր պատճառի երբ իր մէկ տարեկան Ամսավճարները չի վճարած՝ առաջին անգամ կազդարարուի երկրորդին՝ անգամակցութենէ կը դադրի:

Յօդ. 62. - Հրաժարիլ ցանկացող անդամ մը, հար-

ժարուելէ առաջ պարտաւոր է իր մնացած ամսավճարները, ինչպէս նաև իր խոստացած նուէրները (եթէ երբէք խոստացած է) ամբողջութեամբ վճարել. ապա թէ ոչ որպէս զեղծարար՝ արտաքսուած կը հռչակուի:

Յօդ. 63. - Անդամ մը երբ առանց բանաւոր պատճառի, Անդամական Ժողովներուն բացակայ կը մնայ, առաջին և երկրորդին կազմարարուի, իսկ երրորդին անդամակցութիւնէ կը դադրի:

Յօդ. 64. - Երբ Կեդր. Վարչութեան անդամ մը հրաժարի կամ հեռանայ, իրեն կը յաջորդէ Պատգ. Ժողովին մէջ համեմատական առաւել քուէ առնողը:

Յօդ. 65. - Միութեանս մասնաճիւղերը իրենց Գանձարանին մէջ 3-5 տօլ. պահելու իրաւունք միայն ունին, իսկ աւելին պարտաւոր են ղրկել Կեդր. Վարչութեան:

Յօդ. 66. - Սղամ գիւղի մէջ Միութեանս անդամակցիլ փափաքողները պարտաւոր են վճարել 5 ղրշ. իբրև մուտք և 20 փարայ Ամսավճար:

Յօդ. 67. - Միութեանս չանդամակցող ունէ Սղամցի, իրաւունք չունի գիւղիս դպրոցի գործերուն միջամտել:

Յօդ. 68. - Երկրին խնամակալութիւնը՝ պարտաւոր է Կեդ. Վարչութեան տուած հրահանգներու համաձայն իր գործերը վարել: Հակառակ ընթացքի մէջ գանուած պարագային, Կեդ. Վարչ.ը՝ իրաւունք ունի զայն լուծել և ուրիշներ կարգել Երկրի Խնամակալոչքիչն:

Ներկայ Կանոնագիրը իր բնագրին մէջ քննուած և վաւերացուած է թէ Մասնաճիւղերու և թէ Կեդ. Վարչութեան կողմէն:

Տպագրեալ ի Նիւ Եօրք

1910, Յունիս 20

յ«ԱՐԱՔՍ ՏՊԱՐԱՆԻ»